ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2025

Տավուշ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ընդհանուր արմատ ունեն:**

1) հրացան, աքցան, աղցան, ցիրուցան
2) ուղեկալ, գործուղում, ուղեցույց, խճուղի
3) թզենի, թզուտ, թզուկ, թզաչիր
4) հնոտի, հնոց, հնավանդ, հնագետ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում տրված տառը կամ տառակապակցությունը:**

1) տարաշխար-իկ, հայթ-այթել, նախագա-, արհամար-ել –***հ***
2) վաղ-ղոք, ան-տարելի, օր-ղոց, մեղմ-ղոր –***օ***
3) հար-ուխ, ար-ունք, սրաշեղ-, շամ-ուտ –***ք***
4) գիր-, սաղար-, թա-երգություն, կա-սա –***թ***

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:**

1) տա-ական, կե-ե, տա-ամետ, մ-կածուփ
2) հե-ենական, բու-այական, ֆի-ական, այ-ենական
3) տանջա-ուկ, խ-ալ, այ-ուբեն, անդո-ագիր
4) բնօ-ան, ըն-իմակաց, ըն-արմանալ, ու-ակի

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին:**

1) խոսքի(մասային), գյուղե(գյուղ), հետ(ծննդյան), վեր(կենալ)
2) փոխ(արքա), ըստ(ամենայնի), վեր(լուծել), ոչ(ինչ)
3) քաջ(առողջություն), ի(զուր), մերձ(քաղաքային), հատ(ընտիր)
4) մաս(մաքուր), գլուխ(կոտրուկ), անդր(բևեռային), գազ(այրիչ)

5 **Ո՞ր շարքի ոչ մի բառում գաղտնավանկ *չկա:***

1) մանրահատակ, աստղագետ, գրքային
2) մարդկային, գանգրահեր, զննել
3) ատամնաբույժ, ամբաստանյալ, դասընկեր
4) չմուշկ, դեղորայք, փափկամորթ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա:**

1) խցանահան, փշածառ, արևմտյան, ընչացք
2) տամկանալ, անրջանք, անգթություն, ըմպան
3) հնչակ, մտածել, կատվառյուծ, ձվածեղ
4) լրագիր, առևտրական, ընչաքաղց, ջրառատ

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն *-յակ* վերջածանց:**

1) տասնյակ, պատանյակ, սպասյակ
2) հնգյակ, եռամսյակ, որդյակ
3) քառյակ, խոյակ, վեցօրյակ
4) ոսպնյակ, հարսնյակ, երկվորյակ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են թվականներ:**

1) քառամյա, քսանական, քառորդ
2) յոթերորդ, հիսնյակ, չորս հինգերորդ
3) երկուական, միլիոն, վեցուկես
4) ութսունչորս, տասնավոր, մեկ-երկու

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավանկ:**

1) հրակայուն, հնամենի, արծաթահնչյուն, հիմնադրել
2) արդարադատ, հնադարյան, սնահավատ, լրտես
3) խառնաշփոթ, կաթնակեր, կարգապահ, հյուրասիրել
4) կենսատու, լայնարձակ, նամակագրություն, եռոտանի

10 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) գրավել, հմայել, առինքնել
2) խանդաղատել, փաղաքշել, գորովել
3) ունայն, փուչ, անբովանդակ
4) դավանել, խեղաթյուրել, նենգափոխել

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:**

1) արջառոս, բազմափորձ, բազմատարր, քարածուխ
2) բյուրասքանչ, վազեվազ, որդեսեր, տնտեսագետ
3) բարձրատոհմ, բարձիթողի, բարյացակամ, բեռնանավ
4) բանակատեղ, ագեվազ, բարեբնույթ, կուսակցական

12 **Ո՞ր շարքում ներքին հոլովման ենթարկվող բառ *չկա:***

1) վանահայր, սառցալեռ, աշուն
2) ծնունդ, գարուն, անկյուն
3) հանգիստ, մականուն, սեր
4) շարժում, դաշտամուկ, դոփյուն

13 **Ո՞ր նախադասության մեջ *գրող* բառը գոյական *չէ:***

1) Սարոյանը, թեև գրում էր անգլերեն, իրեն հայ գրող էր համարում:
2) Մայրս երազում էր, որ «Գիքորը» գրողի պես մարդ դառնամ:
3) Ա. Բակունցն առասպելի հերոսի պես ընդամենը մի քանի տարում սովորական գյուղթղթակցից դարձավ մեծ գրող:
4) Այսօր քչերը գիտեն, որ հանճարեղ գրող Անտոն Չեխովը նաև բժիշկ էր:

14 **Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ ձև *չկա:***

1) Բանախոսի դեմ ելույթ էին ունեցել երկու տեղացի նկարիչներ, ոմն արվեստագետ Ֆրանսիայից և այլոք:
2) Հասկանո՞ւմ եք, ոչ մեկ չփորձեց օգնել ինձ, երբ մենակ էի ու անօգ:
3) Չգիտեմ՝ ո՛րդ կարող է գլուխ հանել այդ խճճված գործից:
4) Ոչնչից և ոչ ոքից այնքան չէր զգուշանում, որքան իրեն անձնական թիկնապահից:

15 **Տեքստից դուրս բերված նախադասությունների՝ բաց թողած տեղերում տեղադրելու ո՞ր հերթականությունն է ճիշտ:**

Փոքր հորեղբայրս իր համար երամակից չորս տարեկան մի ձի ընտրեց: Դա, հիսուներեք հատ իր նման չորս տարեկանների խառնված, սլանում էր, ջուր էր խմում, արածում էր, խրտնում էր, նրանց մեջ չէր երևում: ……Նրան տապալեցին, վիզը ոլորեցին դեսուդեն, փորատակը վառեցին հյուսկեն մտրակով, քթերից արյուն բերեցին, տրորեցին, քրտնեցրի՜ն, դարձրին հանգած ածուխ: Նա այնքան էր խեղճացել, որ Փոքր հորեղբայրս աղաչում էր վեր կենալ, և մենք հույս չունեինք, թե նա երբևէ ոտքի կելնի, և Փոքր հորեղբայրս նրան փաղաքշում էր: Իսկ նա պառկած ուժ էր հավաքում՝ չենթարկվելու համար: Փոքր հորեղբայրս նրան քաշելով տուն էր բերում, զրուցելով խոստանում էր եղբայր լինել նրան, բերանին շաքար էր դեմ անում: ……. Փոքր հորեղբայրս ասում էր, որ չի թողնի՝ երեխաները նրան չարչարեն, չի տա ուրիշների՝ տանեն՝ ցորեն բերելու հեռու շոգ գյուղերից, շուտ-շուտ կջրի նրան, կուտեցնի ափի միջից, պայտն ընկած՝ չի բանեցնի, և նրա թամբը կլինի գյուղի բոլոր թամբերից ամենալավը: ……. Այդպես չէր լինի, այդպես չէր լինի... ոսկորը ջահել, չպնդված. այդպես չէր կարելի: Նա ընկավ, սրունքը կաշվի տակ մանր փշրվել էր, և սմբակը էլ իրենը չէր:

- Հիմա՛ր, հիմարի գլո՛ւխ...

Նա ծղրտում էր և դեռ տաք էր. չէր զգում, ուզում էր կանգնել: Կանգնում էր, ոտքը ծալվում ու տակից փախչում էր, և նա խուլ թրմփում էր խոտերի մեջ: ……. Եվ լողում էր քրտինքի մեջ:

- Հիմա՛ր անպետք...

Փոքր հորեղբայրս նստեց նրա մոտ, նրա գետնաքարշ պտույտների հետ ինքն էլ պտտվեց ու տեսավ, որ հեռաստանները ճոճվում են, հեռաստանները մշուշի մեջ շուռ են գալիս հեռաստանների վրա: Փոքր հորեղբայրս հեռացավ: Մի երկու օր շարունակ մտմտում էր, ուզում էր բան պատմել Մեծ հորեղբորս և նստում էր՝ ջահել մեջքը ճկած: ……. Միտքը բոլորովին ուրիշ տեղ էր: Ծուխն աչքերից քշելով՝ նա բան էր կակազում.

- Քրտնե՜լ էր, քրտինքի մեջ լողում էր: Կապտասպիտակ էր, չէ՞, մգացե՜լ, դարձել էր համարյա թե սև. քրտինքից:

1. Իսկ այդ հիմարը ձգձգատում էր դեպի սարերը, գալիս էր՝ ետ-ետ նայելով:
2. Երամակը լեռների ուսագծերին խաղ էր անում, կանչում էր նրան չափ ընկնելու, և նա պտտվում էր տեղում, իրեն ու գետինը մաշում էր:
3. Բռնելիս և բռնելուց հետո պարզվեց, որ շիկացած ածուխ է:
4. Եվ ձայնը խռպոտել էր:
5. Իսկ այդ անհասկացողը ետ ձգեց, ետ ձգեց, ծառս եղավ, կախվեց օդում ու ծառս եղած պտտվեց երամակի կողմը:

1) 1, 3, 4, 5, 2
2) 3, 1, 5, 2, 4
3) 1, 2, 3, 5, 4
4) 3, 1, 4, 5, 2

16 **Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի:**

1) Հրդեհի լուրը ստանալուց հետո հրամայել էր անմիջապես բոցերի ճիրաններից փրկել փաստաթղթերը:
2) Նա որոշել էր պարապ չնստել և զբաղվել ինքնակրթությամբ կարդում էր ձեռքն ընկած գիրքը:
3) Այդ փողոցից կարելի է մտնել մեկ ուրիշ փողոց այնտեղից մի փոքրիկ նրբանցք որ նման է մրջնանոցի:
4) Իմ երազներում հաճախ նա ինձ պատկերանում է որպես վաղեմի մի բարեկամ:

17 **Ո՞ր տարբերակում թերի նախադասություն կա:**

1) Անհիշելի վերհուշերի մշուշներում նրբաղոտ Երբեմն ասես զգում եմ ես, թե կհասնեմ Նրա մոտ:
2) Կա միայն մի խնդություն՝ Արժան ու հավերժ, Լինել անզեն ու անտուն, Չարչարվել անվերջ:
3) Պարզ ջրի վրա եղեգը, հանդարտ, Անդողդոջ կանգնած, էլ չի շշնջում:
4) Վերջապես քի՞չ կան հրճվելու բաներ, Եվ լալու բաներ քի՞չ կան աշխարհում:

18 **Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված գոյականով:**

1) Ձեռագրից անմիջապես կռահեցի, թե ով է եղել գրողը:
2) Պատարագն ավարտելուց հետո հայրենասիրական ճառ ասաց:
3) Մինչև պատվիրակների ժամանելը ամեն ինչ պատրաստ էր:
4) Մենք ուզում ենք շուտ ծանոթանալ մեկմեկու նախասիրություններին, բնավորությանը:

19 **Ո՞ր նախադասությանն է համապատասխանում տրված գծապատկերը:**



1) Ինչքան էլ պապս ստիպեց, չասացի, թե ինչ էր եղել, և գիշերը մորեղբայրս համբուրեց ինձ ու ասաց, որ կամաց-կամաց իսկական տղամարդ եմ դառնում:
2) Երբ ես փոքր էի, մեկ-մեկ մորեղբայրս ինձ տանում էր անտառ, անտառում դիտմամբ «կորցնում էր» ինձ, թողնում էր մի ծմակում, որ մենակ մնամ, սովորեմ չվախենալ:
3) Թեև մենք իրարից մինչև օրս գաղտնիք չունեինք, ոչինչ չէինք թաքցնում միմյանցից, բայց վերջերս զգալի կերպով նա լռակյաց էր դարձել, խուսափում էր խոսել այն զգացմունքների մասին, որ բռնկվել էին իր հոգում, տանջում էին իրեն:
4) Երբ ավարտվում էին դաշտային աշխատանքները, երեկո էր լինում, քաղաքի բնակիչները բարձրանում էին քաղաք, որովհետև գիշերները դաշտն էին լցվում արյունարբու ավազակներ, որոնք կողոպտում էին մարդկանց, ապա հեռանում միայն այն ժամանակ, երբ լուսաստղն էր փայլում երկնքում:

20 **Գ. Զոհրապի «Զաբուղոն» նովելի համանուն հերոսի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

1) Զաբուղոնը և Վասիլիկը եկեղեցում ամուսնանում են:
2) Զաբուղոնը գողությամբ էր զբաղվում՝ դժվար փորձությունները հաղթահարելու իր բուռն ցանկությունը բավարարելու համար:
3) Տեսնելով իր սիրած աղջկան ուրիշ երիտասարդի հետ՝ չի սպանում նրանց, որովհետև արժանի չի համարում իր վրեժին:
4) Զաբուղոնը բանտից փախչելուց հետո կրկին բանտ է վերադառնում:

21 **Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Հազրոն առավ իր միակ հարազատին աղջկան և քարայծի արահետներով նրա հետ գնաց հարավի կողմը:
2) Հարևան կտուրների վրայից տների պատշգամբներից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը:
3) Մեր գյուղի մասին խոսելիս այժմ էլ օրերի մշուշից ելնում է իմ առջև մեր հին տունը:
4) Ահա մեր գետը մեր զուլալ գետը կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ հաշվել:

22 **Բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Գիրքը հասցեագրված է բոլոր երեխաներին և այն մեծահասակներին, որոնք սիրում են մանկական գրքեր կարդալ:*
   Գիրքը հասցեագրված է մանկական գրքեր կարդալ սիրող բոլոր երեխաներին և մեծահասակներին:
2) *Հիշում եմ այդ երջանիկ օրը, երբ ծնողներս ինձ տեղափոխեցին եկեղեցական դպրոց:*
   Հիշում եմ ծնողներիս՝ ինձ եկեղեցական դպրոց տեղափոխելու երջանիկ օրը:
3) *Իր արվեստի շատ գեղեցկություններ արտիստն ստացել է նրանցից, ովքեր դասավանդել են իրեն պատանության տարիներին:*
   Իր արվեստի շատ գեղեցկություններ արտիստն ստացել է պատանության տարիներին իրեն դասավանդածներից:
4) *Ես չգիտեի, թե ինչ տարբերություն կա փողոցի և դպրոցի միջև:*
   Ես չգիտեի փողոցի և դպրոցի տարբերությունը:

23 **Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված *չկա* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Դիմացը նեղ ձորն էր վերքի նման լեռների ճերմակ մարմնին կպած:
2) Մանկության արահետը որ թփերի մեջ գալարվելով ձգվում էր դեպի գյուղ մի տեսակ ավելի նեղ թվաց:
3) Անակնկալի գալով մի պահ ընկրկում ենք բայց մղվում ենք առաջ երգելով ու կատակելով:
4) Վանքի բակից նա արագ դուրս եկավ մղձավանջից խուսափող մարդու նման:

24 **Ո՞ր նախադասությունն է միջին հայերենով:**

1) Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ Ծաւալանայր յառաւօտուն:
2) Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կը կարծե այս խմբագիրն:
3) Էրնեկ ես անոր կու տամ, որ առեր իւր եարն է փախեր:
4) Մեզ ասող չի ըլում, թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի համար ենք եկել աշխարհ:

25 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Աչքերը սև – ..... սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

1) հակինթներ
2) արևներ
3) ողկույզներ
4) կայծակներ

26 **Տրված հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:**

Եվ մահամերձն ալ կ՚ուզե երկու բան,
Նախ՝ կյանքը, վերջը՝ լացող մ՚իր վրան:

1) Մ. Մեծարենց. «Արևին»
2) Պ. Դուրյան. «Տրտունջք»
3) Գրիգոր Նարեկացի. «Մատյան ողբերգության»
4) Ե. Չարենց. «Մահվան տեսիլ»

27 **Տրված մտքերից ո՞րը Ոսկեդարի պատմիչներից որի՞ երկին է վերաբերում: Լուծման տարբերակներից որո՞ւմ սխալ *չկա:***

ա. Շարադրում է Վարդանանց պատերազմի հերոսական դրվագները (451 թ.):
բ. Հիմնականում ընդգրկում է Հայաստանում քրիստոնեության տարածման շրջանը, երբ Տրդատ Մեծ թագավորի և Գրիգոր Լուսավորչի ջանքերով մեր երկրում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն (301թ.):
գ. Նկարագրում է 460-480-ական թվականների պատմական իրողությունները, մասնավորապես՝ Վահանանց պատերազմը:
դ. Պատմությունը սկսվում է Տրդատ Մեծից և հասնում մինչև 387 թվականը, երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:
ե. Գրքի շնորհիվ անդառնալի կորստից փրկվել են հայոց հին բանահյուսության մի շարք նմուշներ:

1. Ագաթանգեղոս
2. Եղիշե
3. Մովսես Խորենացի
4. Ղազար Փարպեցի
5. Փավստոս Բուզանդ

1) ա-2, բ-1, գ-4, դ-5, ե-3
2) ա-5, բ-2, գ-4, դ-1, ե-3
3) ա-2, բ-1, գ-5, դ-4, ե-3
4) ա-5, բ-1, գ-4, դ-3, ե-2

28 **Ի՞նչ նպատակով էր Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր հերոս Աբիսողոմ աղան Տրապիզոնից եկել Պոլիս:**

1) Ազգային ժողովում երեսփոխան ընտրվելու
2) ամուսնանալու համար աղջիկ ընտրելու
3) հարազատներին տեսակցելու
4) մայրաքաղաքի մտավորականներին հովանավոր կարգվելու

29 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում Վասակ Սյունին նշվածներից ո՞ւմ էր համարում իրեն գլխավոր գործակից:**

1) Վահևունյաց Գյուտին
2) Գաղիշո Խորխոռունուն
3) Վարազվաղանին
4) Արտակ Ռշտունուն

30 **Տրված տեքստի համարակալված պարբերություններից որո՞ւմ ավելորդ նախադասություն կա:**

1. Այս սրճարանը իր ժամանակին մեծ համբավ ու կշիռ ունեցող վայր էր: Այսօր էլ նույնն է, թեպետ քսան տարի առաջ հաճախորդներից շատերը մահացել են: Այդ սրճարանում սեղանները անմշակ փայտերից էին, շրջանաձև դասավորված, փոքր-ինչ ցածրադիր:
2. Մեծ մասամբ հայերն էին հաճախում այնտեղ, բայց գալիս էին նաև ուրիշները: Բոլոր նրանք, ովքեր հիշում էին հին երկիրը: Բոլոր նրանք, ովքեր հին երկիրը սիրում էին: Բոլոր նրանք, ովքեր ճաշակել էին հին երկրի կերակուրը, գինին ու փոքրիկ բաժակներով սուրճը կեսօրից հետո: Բոլոր նրանք, ովքեր սիրում էին երգերն ու պատմությունները: Եվ բոլոր նրանք, ովքեր սիրում էին լինել ընտանի բույր ունեցող մի վայրում՝ հայրենիքից հազարավոր մղոններ հեռու:
3. Խոսրով քեռիս առավելապես կեսօրից հետո՝ ժամը երեքի մոտ էր մտնում սրճարան: Մի որպե կանգնում էր, հայացքը ման ածում մարդկանց վրա, հետո առանձին նստում էր մի անկյունում: Սովորաբար մեկ ժամ նստում էր անշարժ, ապա դուրս գնում՝ սոսկալի բարկացած, թեև ոչ ոք նրան մի բառ անգամ չէր ասել:
4. - Խե՜ղճ տղաներ,- ասում էր նա:- Խեղճուկրա՜կ որբեր:
   Խեղճուկրակ... Անկարելի է այս մի բառը անգլերեն թարգմանել: Չկա, սակայն, ավելի վշտալի բան կյանքում և աշխարհում, քան խեղճուկրակը:

1) 4-րդ
2) 1-ին
3) 2-րդ
4) 3-րդ

31 **Ո՞ր հատվածն է Պ. Սևակի «Վարք մեծաց» բանաստեղծությունից:**

1) Նա օտար հրի ճարակի դիմաց
   Մեր ինքնությունը կոփեց ու կռեց:
2) Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
   Որպեսզի դառնան նոր զորեղություն:
3) Տարիներ հետո նա պիտի դառնա
   Մի ժողովրդի ազնիվ կենսագիր:
4) Սերում են նրանք և այն ծերուկից,
   Որ նախընտրում էր ապրել տակառում:

32 **Ո՞ր տարբերակում է Հ. Թումանյանի քառյակում բաց թողած բառը ճիշտ տրված:**

1) Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում,
..... սրտով աշխարհ լցվեց մեր դարում.
Ցավոտ աշխարհքն եկավ լցվեց բովանդակ
Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:
(Ցավոտ)

2) Աշնան ամպին ու զամպին,
…… նստած իր ճմբին,
Լռռու հանդում՝ մի արտուտ
Նայում է միշտ իմ ճամփին:
(Տխուր)

3) Իմ կնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կընքահայրս, ցողը՝ մյուռոն .....,
Ու կնքողս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:
(հոտավետ)

4) Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան:
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ .....,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:
(անճար)

33 **Տրված հատվածում համարակալվածներից որո՞նք են հանգման անուղղակի խնդիր:**

Տարիներ անց շատ որոնեցի <u>1. ծերունուն</u>. ուզում էի նորից հանդիպել <u>2. նրան,</u> բայց չգտա: Կարոտով նայեցի նրա վաղեմի <u>3. բնակարանին</u>: Ո՞վ գիտի, ո՞ւր է նա. արդյոք մարդկանց կոշիկները կարկատո՞ւմ է, թե՞ պատմում է գոյության կռվի դաժան ալիքների մասին, որոնք այնքան զորեղ են <u>4. աղքատներին</u> փշրելու մեջ: <u>5. Աչքերիս</u> առաջ երևաց թոռնիկը, բարևեց <u>6. ինձ</u>, մոտեցավ <u>7. պատուհանին</u> և խոհուն հայացքը հառեց <u>8. սարերին</u>:

34 **Տրված բաղադրյալ հատուկ անուններից որոնցո՞ւմ գրության սխալ կա:**

1. Լուիզ Սիմոն-Մանուկյան, 2. Հուդզոնի ծոց, 3. Կալիֆոռնիայի Նահանգ, 4. Լոպե Դե Վեգա, 5. Խոսրովի արգելավայր, 6. Պողոս Առաքյալ 7. Կենտրոնական Եվրոպա, 8. Միավորված Ազգերի Կազմակերպություն

35 **Ո՞ր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1. երկբայություն-տարակուսանք, 2. դեգերել-իջևանել, 3. բանսարկել-բանավիճել, 4. տարտամ-անորոշ, 5. անընտել-անվարժ, 6. խուռներամ-բազմագույն, 7. բոսոր-խաժ, 8. անթաքույց-բացահայտ

36 **Տրված բառաշարքում որո՞նք են *հոգի* բառի բառաձևեր:**

1. հոգոց, 2. հոգիներով, 3. հոգյակ, 4. հոգուց, 5. հոգուն, 6. հոգալ, 7. հոգս, 8. հոգիդ

37 **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Մինչ նրանք օտարությունից վերադառնալով՝ ցանկանում էին շենացնել իրենց տները, այդ ժամանակ երկրում տեղի էին ունենում արյունալի իրադարձություններ:
2. Նա հիպնոսացած էր, կախարդված և չգիտեր՝ ուր է տանում իրեն կյանքը:
3. Շրջում եմ Վերսալի արքայական պալատի բակերում՝ հոյակապ ծառուղիներ, մարմարյա ավազաններ, հախճապակյա ծաղկամաններ, հեթանոս աստվածների կիսանդրիներ:
4. Իշխանի վրա իրենց հրացայտ աչքերն էին հառել երկու ըմբոստ դեռատիներ, որոնք, շրջապատի լռությունից գրգռված, կարծես կամենում էին սլանալ դեպի իշխանը:
5. Տղան այդ հանդիպումից հետո անդադար մտածում էր. «Տեսնես ի՞նչ է նրա անունը»:

38 **Ո՞ր նախադասություններում խնդրառության կամ շարադասության սխալ կա:**

1. Անհրաժեշտ է խրախուսել նրա բոլոր քայլերին և աջակցել անվերապահորեն:
2. Ֆրանսիայի հյուսիս-արևելքում՝ Բրետոնում, քարե մեծ հուշարձան կա, որն իր մոտակայքում գտնվող քաղաքի հետ կոչվում է Քարակ, իսկ բրետոներենով արտասանվում է «Քարնիխ», այսինքն՝ Քարնակ, Քարնիշ, որը նշանակում է «հնչող քարեր»:
3. Երվանդ Քոչարի Երևանի թանգարանի ցուցանմուշներից շատերը ժամանակակից եռաչափ նկարների նախանմուշներ կարող են համարվել:
4. Ըստ աստղագիտության պատմաբան Վ. Օլբոթի՝ առաջին մարդիկ, ովքեր բաժանել են երկինքը համաստեղությունների, ապրել են ոչ թե Բաբելոնում, այլ Եգիպտոսում:

39 **Տրված նախադասություններից քանիսո՞ւմ գործածված բոլոր դերանուններն են միևնույն տեսակի:**

- Ես ձեր խիղճն եմ, ինձ մի՛ խաբեք, Ձեր թևերն եմ, ինձ մի՛ կապեք:
- Երեխաներ ենք բոլորս մի տան, Ողջո՛ւյն քեզ, հրա՛շք հավիտենություն:
- Տեսնես ի՞նչ էին ասում իրար, Երբ լսում էին ղողանջը մեր:
- Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ, Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի:
- Այդ ճանապարհը թեև քաղաքի փեշով է անցնում, բայց չի տարբերվում գյուղի մյուս ճանապարհներից:
- Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է, Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է:

40 **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա:**

ճքնել, ճառագել, ճկվել, ճաքճքել, ճամառտակել, ճեղքել, ճմրթել, ճպրոտել

41 **Տրված բառերից քանիսի՞ արմատին կամ արմատներից մեկին կարող է միանալ *-ք* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

օդահեն, խնամատար, պարտատեր, հավանություն, ապուշություն, անհետացում, թուլակամություն, կամարաձև

42 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սը *չեն* գործածվել:**

Երկինքն ու ծովը գրկել են իրար,
Մակույկն է սահում չգիտես թե ուր.
Իսկն ու երազը ձուլվել են իսպառ,
Ոչինչ չի տենչում իմ հոգին տխուր:

շրջադասություն, հանգավորում, չափազանցություն, փոխաբերություն, համեմատություն

43 **Տարբերակներից քանիսո՞ւմ նախադասության անդամի շարահյուսական վերլուծության սխալ կա:**

Երբեմն մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխվում, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում ես խորությամբ. ասես երեկ ես տեսել նրան:

- **երբեմն** - ժամանակի պարագա, **նրան - հանգման խնդիր**
- **հիշողության մեջ** - տեղի պարագա, **դեմք** - ենթակա
- **այնպես** - ձևի պարագա, **մեխվում է** - բաղադրյալ ստորոգյալ
- **տասնյակ** - որոշիչ, **ասես**- պարզ ստորոգյալ
- **խորությամբ** - միջոցի խնդիր, **երեկ** - ժամանակի պարագա

44 **Շարքերից քանիսո՞ւմ հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- սրճեփներ, կաղրեր, ֆիդայիններ
- օրհներգեր, գրասերներ, ոտնաչափեր
- հացատներ, սկիզբներ, գրաշարներ
- երկրապահներ, պատճեններ, շարասյուներ
- աշխատավարձներ, ոտնաձայներ, այտոսկրեր

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Միևնույն բառը չի կարող ունենալ երկու նախածանց:
2. Որոշ արմատներ ինքնուրույն գործածություն չունեն:
3. Հայերենում վերջածանցներն ավելի շատ են, քան նախածանցները:
4. Նախածանցից, արմատից և վերջածանցից կազմված բառերը բարդածանցավոր բառեր են:
5. ***Գույն, գին, հակ, տրամ*** բաղադրիչները որոշ դեպքերում արմատներ են, որոշ դեպքերում՝ ածանցներ:
6. Բառի հիմնական իմաստը արտահայտում է արմատը, որը բառակազմորեն անբաժանելի է:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) վախճան, սխտոր, գլխարկ
2) գավաթ, նախիր, կոճակ
3) եղջյուր, առաջ, պատվեր
4) խավար, կատակ, խախուտ

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա:**

1) ուսուցչապետ, ալրաղաց, սուրալ
2) լուսատու, արնաշաղախ, ալեհույզ
3) բուրումնալից, փութաջան, բնամթերք
4) ուխտադրժորեն, սենեկապետ, խուզարկու

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ածանցի հնչյունափոխություն կա:**

1) սննդամթերք, բնութագրական, մարդկային
2) հատկություն, ժողովրդական, թղթակցություն
3) գործնական, անասնապահ, միջնակարգ
4) թարգմանչական, խորհրդավոր, փափկասուն

49 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Փողոցով գնում էր հր-(1) մի անդամալույ-(2)՝ հենված անթացուպին: Նա հա-ել(3) էր մուգ գույնի ար-ուկված(4) տաբատ, ճ-քավոր(5) կոշիկներ: Վրդո-ած(6) շուրջն էր նայում, երբ նրան մոտեցավ պատանի Եղ-ն(7) ու հարցրեց, թե ինչու է անհանգիստ: Իմանալով, թե մարդը ինչ է փնտրում՝ առաջնորդեց հանդիպակա-(8) տունը: Տան բակում եր-նավառ(9) ծաղիկներ էին, իսկ այգում կանգնած էր մի հսկա խր-վիլակ(10):

1) 2-ծ, 3-գ, 6-վ, 9-փ
2) 2-ծ, 4-դ, 8-ց, 10-տ
3) 1-իա, 3-գ, 7-իա, 9-փ
4) 1-իա, 4-դ, 5-տ, 8-ց

50 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը կամ բառաձևերը համանուններ *չեն:***

1) երկինք-***գետին*** - Արաքս ***գետին***
2) մեկ կապ ***գայլուկ*** - գորշ ***գայլուկ***
3) մկան ***թակարդ*** - սիրո ***թակարդ***
4) զորքի ***գունդ*** - խմորի ***գունդ***

51 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) ***ակնակապիճ*** – աչքի փոսիկ, ***աղամորդի*** – մարդ արարած
2) ***անպաճույճ*** – առանց զարդարվելու, ***բամբիշ*** – լուր բերող
3) ***ծանծաղ*** – փոքր խորություն ունեցող, ***սրվակ*** – ապակյա փոքրիկ անոթ
4) ***բախտակ*** – ձկան տեսակ, ***գրգամոլ*** – փափուկ կյանք սիրող

52 **Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

1) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:
2) Այնպես էին խառնել ամեն ինչ՝ սատանան իսկ գլուխ չէր հանի:
3) Գարունը բացվի թե չէ, կտեղափոխվենք:
4) Չնայած սառնամանիքին՝ մրցումները չէին դադարել:

53 **Փակագծերում տրված բառերից կամ բառաձևերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. Առաջադեմ գրողը իր հայրենիքի դիվանագետներին կհուշի խոսք բացել հայերին պատճառված վնասի մասին և վեհանձնաբար հանձն առնել վնասի (1. հատուցումը, 2. հարուցումը):
բ. Երիտասարդը (1. ասպանդակեց, 2. ասպատակեց) ձին և հպարտ անցավ:
գ. Քամին ասաց արմավենուն. «Առավոտից մինչև առավոտ ոտներիդ ներքև ես քեզ եմ հսկում (1. անշեջ, 2. անխոնջ) ու արթուն»:
դ. Հոգնած ու հուսաբեկ ընկավ դռան առջև՝ մի քարի վրա, (1. խորշոմած, 2. խորազնին) ճակատը սեղմեց չոր ծնկներին:

1) ա-1, բ-1, գ-2, դ-1
2) ա-2, բ-2, գ-1, դ-1
3) ա-1, բ-2, գ-1, դ-2
4) ա-2, բ-2, գ-2, դ-1

54 **Ո՞ր նախադասության մեջ բայի կազմության սխալ ձև *չկա:***

1) Ամեն քայլափոխի հանդիպում էին հաց մուրող մարդիկ:
2) Տնային ծաղիկներ աճացնելը այնքան էլ հեշտ գործ չէ:
3) Այդ շաղակրատը ամեն տեղ էլ խոսած կլինի մեր մասին:
4) Ջրից փախնողը հայտնվեց կրակի մեջ:

55 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:**

1) թռել է, հիշում էր, չգար, եկավ
2) լալիս է, եղավ, չեմ բերի, բերելու եմ
3) գիտեմ, եղավ, չեմ գալու, գրել եմ
4) չուզեց, գրեմ, փախել էինք, հիշելու է

56 **Նախադասության անդամների ձևաբանական վերլուծության ո՞ր տարբերակում սխալ *չկա:***

Միքայելը շատ անգամ էր պարծեցել իր ընկերների մոտ, թե հոր մահից հետո այնքան է ծախսելու, որքան ոչ ոք դեռ չի ծախսել, ու այսօր իմանում է, որ դեռ պետք է սպասել:

1) **պարծեցել էր** – վաղակատար անցյալ, **այնքան** – չափի մակբայ
2) **չի ծախսել** – ենթադրական եղանակի բայ, **մոտ** – հետադիր կապ
3) **իմանում է** – սոսկածանցավոր բայ, **այսօր** – ժամանակի մակբայ
4) **պետք է սպասել** – հարկադրական ապառնի, **ոչ ոք** – ժխտական դերանուն

57 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Ստեղծագործական ամուլ դրության պատճառով գեղարվեստն ու գրականությունը գոհանում էին երեկվա հնոտիքը ծամծմելով:*
   Գեղարվեստն ու գրականությունը գոհանում էին երեկվա հնոտիքը ծամծմելով, քանի որ ստեղծագործական ամուլ դրություն էր:
2) *Այդ ողբերգությունը հասարականում էր հոր ու զավակների միջև մի սովորական ընտանեկան կռվի վերածվելու չափ:*
   Այդ ողբերգությունը հասարականում էր այնքան, որ վերածվում էր հոր ու զավակների միջև մի սովորական ընտանեկան կռվի:
3) *Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ՝ քեզ չխաբելուն:*
   Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ, որ քեզ չի խաբում:
4) *Դերասանի արժանիքները թվարկելիս Փափազյանն առաջնային էր համարում նրա իմացականության աստիճանը:*
   Երբ Փափազյանը թվարկում էր դերասանի արժանիքները, առաջնային էր համարում նրա իմացականության աստիճանը:

58 **Ո՞ր շարքում կա բառ, որը *չի* կարող տեղի մակբայ լինել:**

1) ամենուրեք, այլուր, շուրջը, մոտ
2) ներս, դռնեդուռ, տակավին, տեղից տեղ
3) ընդառաջ, տեղ-տեղ, ցած, տնետուն
4) վերև, դեմ դիմաց, հեռու, դեսուդեն

59 **Ո՞ր նախադասության մեջ գործածված անկանոն բայն է տվյալ ժամանակաձևում անկանոնություն դրսևորել:**

1) Սրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա, Քամին բերի թող մահվան բոթ, ու անձրևը լա:
2) Ասա՛ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:
3) Թատրոնից դուրս գալիս, ամենքին հրաժեշտ տալով, դիմեց դեպի մոտակա սրճարանը՝ հուսալով, որ կտեսնի երեկվա աղջկան:
4) Մեկ էլ տեսար՝ մի բզեզ թռավ, և նրա բզզոցը լսվեց օդում միլիոնավոր բզեզների թևերի բզզոցի ուժգնությամբ:

60 **Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:**

1) Դողդոջ <u>**ձեռքերը**</u> ծնկներին դրած՝ խոսում էր ծերունական բարակ ձայնով:
2) Իրիկնանում է. քաղաքում կամաց-կամաց զարթնում է երեկոյան <u>**աղմուկը**</u>:
3) Իմ հպարտության առարկան վայելչագրությանս <u>**տետրն**</u> է:
4) Մի՞թե <u>**ընկեր**</u> կարող է համարվել նա, ով լքել է քեզ դժվար պահին:

61 **Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:**

1) Խոր նիրհել էր:
2) Մի՞թե դու պետք է երաժիշտ դառնաս:
3) Այժմ անձրևում է:
4) Սենյակում չաղմկե՛լ:

62 **Տրվածներից ո՞րը ճիշտ *չէ* Դ. Վարուժանի «Հարճը» պոեմի վերաբերյալ:**

1) Տիրան արքայի փեսան՝ Տրդատ Բագրատունի իշխանը, ծեծել էր կնոջը, կտրել նրա մազերը և հեռացել:
2) Սյունյաց Բակուր իշխանը, վախենալով Տիրան արքայից, դժկամությամբ է իր հարկի տակ ընդունում Տրդատ Բագրատունուն:
3) Տրդատը, հրապուրվելով Բակուր իշխանի հարճ Նազենիկով, փախցնում է նրան, սակայն Բակուրը հետապնդում է նրանց և սպանում Նազենիկին:
4) Նազենիկի աճյունը Տրդատի կարգադրությամբ ամփոփում են մի չորացած բարդու տակ, որը դրանից հետո վերընձյուղվում է:

63 **Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս նախադասությունը բայական անդամի լրացում *չէ:***

1) Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին:
2) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ, Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ:
3) Երբ բաց եղան գարնան կանաչ դռները, Քնար դարձան աղբյուրները Բինգյոլի:
4) Եթե ուզեն, արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր:

64 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Սարոյանը գրում էր՝ …… իր …. արվեստագետներից մեկի՝ Անտոն Չեխովի …. սկզբունքին. «Իրավացի է նա, ով անկեղծ …..»:

(1. եմ, 2. հետևել, 3. սիրել, 4. հռչակել)

1) 4, 2, 1, 3
2) 2, 4, 1, 3
3) 4, 3, 2, 1
4) 2, 3, 4, 1

65 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Մրսում էր միայնակ թռչունը. փշանման ցցվել էին նրա փետուրները:
2. Եվ ինքնասույզ խորհում էր նա, որ կյանքը տառապանք է, սակայն ապրելու կամքը՝ է՛լ ավելի:
3. Ցյունապատ բարձունքներից և դեղնած լեռնալանջերից թավալվում էր սառնաշունչ քամին:
4. Քաղցած էր նա, և քաղցն ավելի էր տանջում նրան, քան ցուրտը:

1) 3, 1, 4, 2
2) 3, 2, 4, 1
3) 2, 1, 4, 3
4) 2, 3 ,1 ,4

66 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կ՚իյնա վար.
Երազներու ……. է որ կ՚անցնի,
Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար:

1) սիրուհին
2) դիցուհին
3) պերճուհին
4) գեղուհին

67 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Մարդկանց գիտելիքներ շնորհած աստվածներից շատերը ավանդապատումներում պատկերվել են հսկաների տեսքով: Այդպիսիք են եգիպտական Սեթը, արաբական Շեդդ Ադ-Բեն-Ադը, հունական Պրոմեթևսը: Այդպիսի էակների մասին տեղեկություններ կան և՛ ինկերի, և՛ աֆրիկացիների, և՛ հնդիկների, և՛ այլ ժողովուրդների մեջ, և՛ Ղուրանում, և՛ Աստվածաշնչում, և բոլորում էլ նրանց գոյությունը կապվում է նախատապանյան կամ նախասառցապատման ժամանակների հետ: Ենթադրության կա, որ երկրագնդի վրա ապրել են նման հսկաներ, որոնք, ակնհայտ է, երկրաբնակներ չեն եղել, և նրանց հասակը բացատրվում է իրենց մոլորակի ձգողության ուժի թուլությամբ կամ ջրի և այլ սննդատեսակների մեջ կալցիումի շատ մեծ քանակով: Գուցե դա մի այնպիսի մոլորակ է եղել, որի զանգվածը Մարս մոլորակի նման տասն անգամ փոքր է եղել Երկրի զանգվածից: Նրանց մասին տեղեկություններ կան անգամ Պլատոնի՝ Ատլանտիդայի, Լեմուրիայի մասին թողած վկայություններում: Փաստեր կան նմանատիպ տասը քաղաքակրթությունների մասին, որոնք եղել են չափազանց զարգացած, նրանց ներկայացուցիչները ամենայն հավանականությամբ տիրապետել են լազերային բարդ սարքավորումներին, թռչող սարքերին: Միայն այդպիսի հսկաների գոյությամբ կարելի է բացատրել եգիպտական կուլտուրայի, բուրգերի, ինկերի կամ ացտեկների քաղաքակրթության զարգացածության գաղտնիքը: Կա վարկած, որ տասը քաղաքակրթություններն էլ ատոմային պայթյունից են ոչնչացել, և համաշխարհային օվկիանոսը գուցե նրանց հետ կապված լուրջ գաղտնիքներ է թաքցնում:

1. Աստվածաշնչի և Ղուրանի համաձայն՝ հսկաները երկիր են հասել Մարսից և ջրհեղեղից առաջ ապրել են սովորական մարդկանց հետ կողք կողքի:
2. Համաշխարհային օվկիանոսի ուսումնասիրությունը կարող է հանգեցնել հսկաների քաղաքակրթությունների վերաբերյալ նոր բացահայտումների:
3. Ենթադրություններ կան այն մասին, որ Ատլանտիդայում ապրել են հսկաներ, որոնք ստեղծել են բարձր զարգացած քաղաքակրթություն:
4. Երկրի վրա վաղնջական ժամանակներում կալցիումի մեծ քանակի առկայությամբ է բացատրվում հնագույն հսկաների՝ մեծ չափեր ունենալը:
5. Ըստ Պլատոնի վկայության՝ Լեմուրիայի և Ատլանտիդայի հսկայամարմին մարդիկ ատոմային կռիվներ են մղել Ամերիկայի և Աֆրիկայի բնիկների դեմ:

68 **Ո՞ր նախադասություններում հարակատար դերբայ կա:**

1. Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև նրանից առաջ ու հետո ապրած քիչ հայտնի աշուղներով:
2. Բախտի կռանը կամքն է թեև, բայց դիպվածն է տիրական:
3. Ծովափի կինը կարճ խուզած մազեր ուներ:
4. Այդ կինն այդպես էլ առեղծված մնաց նրա համար:
5. Հեղինակը բավական ընդարձակ հավելված էր կցել իր աշխատությանը:

69 **Ո՞ր նախադասություններում միջոցի անուղղակի խնդիր *չկա:***

1. Ու խավարն անհուն գգվանքով թեթև Ծավալվեց շուրջս ու փռվեց վրաս:
2. Ես չար հոսանքով մղված եմ հեռուն, Եվ անվերադարձ փակված է ուղին:
3. Սառն աչքերով եմ նայում ես հեռվում Մեռած օրերիս ցնորքին հիմա:
4. Շրջում եմ դարձյալ պուրակում այն հին՝ Աշնան թախծալի երգով օրորված:
5. Դառը մենության ու անհուսության մթին վիհերում Իմ թույլ սիրտը կամեցա քաղցր հուշով ամոքել:
6. Ուզեցի, որ դու պայծառ ու մաքուր լույսերով անշեջ Եվ խորհուրդներով դյութես վերստին սիրտս տարագիր:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *ճիշտ է, Մխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Այս, այդ, այն*** ցուցական դերանունները գերադաս նախադասության կազմում կարող են հանդես գալ որպես հարաբերյալ:
2. Որոշիչ ստորադաս նախադասությունը կարող է կապվել գերադասին ***որ, երբ, որտեղ*** հարաբերականներով:
3. Ենթակա ստորադաս նախադասությունը գերադասի հետ կարող է կապվել ***որ, թեև, թե*** շաղկապներով:
4. Ներգործող անուղղակի խնդիր ստորադաս նախադասության գերադաս նախադասությունը միշտ կրավորական կառուցվածքի է:
5. Միևնույն բարդ նախադասության կազմում միաժամանակ չեն կարող լինել և՛ համադասությամբ, և՛ ստորադասությամբ կապվող բաղադրիչ նախադասություններ:
6. Գերադաս նախադասության պարզ ստորոգյալը կարող է արտահայտվել ստորադաս նախադասությամբ: